

Ընտրել Հայաստանը

Իմ անունն Արմեն է: Մի փոքր պատմեմ իմ մասին: Ես ծնվել եմ Իրանում, այնուհետև ընտանիքով տեղափոխվել ենք Բոսթոն, երբ ես երկու տարեկան էի, այնպես որ Բոսթոնում եմ մեծացել, այդ պատճառով էլ բոսթոնյան անգլերենի շեշտադրություն ունեմ: 1996 թվականին տեղափոխվեցինք Հայաստան. մեծ շոկ, Բոսթոնից դեպի Նորք Մարաշ տեղափոխվելու ժամանակ: Ես Բոսթոնում նախկինում աշխատում էի մի ընկերությունում, որը կոչվում էր «Garison Group», այժմ ես գործընկեր եմ, ես ունեմ հաճախորդների մեծ պորտֆել, ես աշխատում եմ բազմաթիվ ընկերությունների հետ, այդ թվում «Coca Cola», «Ikea», «Carlsberg», «Procter and Gamble», այնպես որ ցանկացած խոշոր ընկերություն, որը դուք գիտեք այս աշխարհում իմ հաճախորդն է: Ես աշխատել եմ ավելի քան 45 երկրների հետ: Երբ խոսքը վերաբերում է բիզնեսին և ներդրումներին, միաձուլումներին և ձեռքբերումներին, շատ լավ թրծված եմ և ինչպես տեսնում եք, իմ անգլերենն էլ հաճելի է:

Ես ապրել եմ Բուդապեշտում, Մադրիդում, Երևանում. վերջապես տեղափոխվեցինք Երևան, որտեղ իմ որդին ծնվեց, և նա Հայաստանի քաղաքացի է: Մենք այստեղ երկար ժամանակ ապրելու ենք, մենք հայ ենք: Շատ հետաքրքիր է, երբ խոսքը վերաբերում է «Մենք հայ ենք»-ին, երբ իմ դերը վերցրեցի ՀԶՀ-ում (DFA) և ես միացա կառավարությանը, իմ հիմնական խնդիրն էր հասկանալ, թե ի՞նչ է նշանակում հայ լինելը: Երբ արտասահմանյան ներդրողներին ասենք, որ պետք է ներդրումներ կատարեք Հայաստանում, այն պետք է նշանակի ինչ-որ բան: Ես մտածեցի այն մասին, թե ինչպե՞ս ենք մենք ներկայացնում Հայաստանը, Հայաստանն ի՞նչ է առաջարկում, ինչո՞վ ենք մենք լավ, ինձի՞նչո՞վ ենք վատ, ի՞նչ ենք մտածում, երբ ասում եք Հայաստան: Երբ փորձում ենք Հայաստանը բացատրել օտարերկրացուն, որ երբևէ չի լսել Հայաստանի մասին, ի՞նչ բառեր են պետք օգտագործել: Սովորաբար օգտագործում ենք այնպիսի բառեր, ինչպիսիք են օրգանական սննդամթերքը, կրոն, գեղեցիկ բնություն, մեծ մշակույթ և ժառանգություն, խոսում ենք ցեղասպանության մասին, խոսում ենք դարաբաղյան խնդրի մասին: Սրանք այն բաներն են, որ մենք հակված ենք քննարկել և սուևնով տպավորություններ ենք թողնում: Սակայն դա հետաքրքիր չէ ներդրողներին կամ զբոսաշրջիկներին: Կամ արդյոք սա է Հայաստանը: Օրինակ կարող ենք ասել, որ Հայաստանը քիչ երկրներից է, որն ունի շախմատի ուսումնական ծրագիր դպրոցում, որտեղ յուրաքանչյուր ավագ դպրոցի շրջանավարտ գիտի շախմատ խաղալ: Ես սկսեցի խոսել այս բաներից, և դա շատ հետաքրքրեց նրանց: Ներդրողները մտածում են, որ դա ինչ-որ բան է: Մենք ունենք ժամանակակից «TUMO» կենտրոն, որտեղ 12-18 տարեկան երեխաները սովորում են ռոբոտաշինություն, «artificial intelligence» և այլն: Երբ ես հարցրեցի 12-ամյա մի երեխայի «Tumo»-ում, թե ի՞նչ է ուզում դառնալ, երբ մեծանա, նա ասաց, ուզում է «artificial intelligence»-ով զբաղվել: Երբ ես 12 տարեկան էի, նույնիսկ

համակարգիչ չունեի, իսկ հիմա 12 տարեկան հայ երեխան ինձ ասում է, ուզում է, ուզում է, որ «artificial intelligence»-ով է ուզում զբաղվել: Մենք՝ հայերս, ստեղծագործ ազգ ենք և մենք լավ ենք դա անում և այսպիսով ստեղծում ենք շատ բաներ: Ինչ որ տեսնում եք Էկրանին, թթվածնային դիմակն է, որը ստեղծվել է հայի կողմից: Երբ ես խոսում եմ իմ ամերիկացի ընկերների հետ և ասում, որ ձեր \$16 ինքնաթիռները կարող են գոյություն ունենալ միայն այն պատճառով, որ մի հայ թթվածնի դիմակ է ստեղծել, նրանք զարմանում էին: Աս այն է, ինչ մենք անում ենք, մենք ստեղծողներ ենք: Ուրեմն, եթե գերմանացիներն ինժեներ են, իտալացիները դիզայներներ, ապա հայերը՝ ստեղծագործողներ են: Այս է, որ մենք պետք է ի նկատի ունենանք և շատ լավ պատճառ կա, թե ինչու՞ հայերը լավ են ստեղծելուց: Դրա պատճառը շատ պարզ է: Այստեղ կա երկու մեծ փաստարկ՝ ընտանեկան արժեքներ և ճարպկություն: Ինչ վերաբերում է ընտանեկան արժեքներին, մենք գիտենք, որ հայկական ընտանիքները մեծ են և ամուր: Հայկական ընտանիքներում շատ բարձր ճնշում կա, բոլորն իրար ճանաչում են, բոլորը գիտեն միմյանց առանձնահատկությունները: Ձեր ծնողներն օրական 18 անգամ զանգում են ձեզ և նրանք գիտեն, թե ի՞նչ եք արել տվյալ օրը. շատ հետաքրքիր է: Այս ամենից մենք ստանում ենք երկու տեղեկություն. մեծ հայկական ընտանիքներում աճող երեխաները շատ բարձր ճնշման մեջ են ապրում: Նախ և առաջ շատ բարձր ակնկալիքներ կան ընտանիքում, անկախ նրանից, թե որքա՞ն լավ ես անում կյանքում, ակնկալում են ավելին, ավելին ու ավելին: Դրա պատճառը այն է, որ նրանք գիտեն ձեր կյանքի ամեն մի մանրուք և երբ ամեն անգամ փոքր սխալ եք անում, ընտանիքը կարևորում է այն փաստը, ու դա ճնշում ու ազդում է ձեզ վրա. հետևաբար երեխաներն այստեղ ավելի վճռական են:

Երկրորդ պատճառն այն է, որ մենք ավելի շատ մարդասեր ենք: Մենք կարող ենք խոսել տարբեր տեսակի մարդկանց հետ, շփվել նրանց հետ, հասկանալ նրանց կարիքները, քան ցանկացած այլ մշակույթի մարդ, քանի որ մենք ունենք ընտանեկան ճնշում ու դա ստեղծում է ներշնչանքի էներգիան: Թե ինչու՞ ենք մենք այդքան ստեղծագործ պատճառն այն է, որ մենք շատ պայքարել ենք մեր անկախության համար: Աշխարհում կա 5000 ազգություն, որոնցից միայն 200 ունեն երկիր, իսկ մենք ունենք 2 երկիր, որը ստեղծում է ճարպկություն: Մենք քիչ քանակությամբ բաներ ենք վերցնում և մեծ ազդեցություն ենք գործում, եթե դա չանենք մենք չենք կարող գոյություն ունենալ: Ինչպե՞ս է դա վերաբերում ձեզ, այստեղ գումար վաստակելուն: Մի օր ես խոսում էի մի շատ խելացի վենտուրական կապիտալիստի հետ: Նա ուներ 4 միլիարդ դոլարի ֆոնդ և ես քննարկում էի, թե ինչպե՞ս է նա որոշում, թե որտեղ ներդրում կատարել և նա ասեց, որ նախնտրում է ներդնել Ա թիմում, որն ունի Բ գաղափար, քան Բ թիմում, որն ունի Ա գաղափար, որովհետև թիմն է, որ գումար է վաստակում, իսկ հայերը գումար են վաստակում. Հայաստանը հետխորհրդային բոլոր պետությունների շրջանում ամենաբարձր PHD ցուցանիշ ունի: Մենք ունենք ավելի շատ PHD և գիտնականներ, քան որևէ այլ հետխորհրդային երկիր: Մենք ստեղծող ենք, մենք ստեղծում ենք բաներ, մենք

գիտնականներ ենք, ինժեներ, մենք մտածողներ ենք, մենք թիմ Ա ենք: Եկեք ենթադրենք, որ մենք ունենք թիմ, որն է հաջորդ քայլը՝ գումարը:

Եթե մենք նայենք Հայաստանին, որպես ներդրումային հարթակ, այստեղ կա երկու հիմնական տեսակի ներդրումներ, որոնք շահավետ են: Առաջին զբոսաշրջության ոլորտը: Երկրորդը՝ ցանկացած արտադրություն, որը դուք կարող եք արտահանել, քանի որ հայկական շուկան բավարար չէ:

Հայաստանն ունի յուրահատուկ իրավիճակ, որտեղ մենք ունենք ոչ միայն ԱՄՆ-ի հետ GSP համակարգից օգնվելու հնարավորություններ, այլև ունենք Եվրոպական Միության հետ GSP plus ռեժիմ, որը հնարավորություն է տալիս, 10000 տարբեր արտադրատեսակների որոնք, արտադրվում են Հայաստանում արտահանել դեպի Եվրոպա: Դուք ստանում եք ատրիբուտներ և մրցակցային առավելություններ՝ արտադրելով Հայաստանում և տեղափոխելով Եվրոպա:

Ռուսաստանի հետ գտնվում ենք եվրասիական գոտում, որտեղ չկա մաքսային ձևակերպումներ, դա ևս մի առավելություն է: Ռուսաստանն ունի 180 միլիոն բնակչություն, իսկ մյուս կողմից Իրանը 80 միլիոն: Կամ դուք այստեղ պիտի արտադրեք արտահանելու նպատակով կամ ներդրումներ կատարեք զբոսաշրջության ոլորտում:

Թույլ տվեք պատմեմ ձեզ մի պատմություն, երբ ես հանդիպել էի մի գերմանացի ներդրողի հետ, որն արտադրում էր սանիտարական գելեր, և ուներ 40-ից ավելի տարբեր արտադրամասեր աշխարհում և պատրաստվում էր Հայաստանում էլ արտադրամաս բացել, նրան հարցրեցի, թե ինչու՞ եք ընտրել Հայաստանը, և նա ասաց, որ նրանց թիրախային շուկան ՌԴ-ն է, ցանկանում է այստեղ արտադրել և արտահանել Ռուսաստան: Երբ ես ասացի, թե ինչու միանգամից Ռուսաստանում չեք բացում, նա ասաց, որ լրացուցիչ նյութական ծախսերը չեն արդարացնի քաղաքական ռիսկը: Մեր ռազմավարությունը այն է, որ արտադրենք փոքր երկրում, ավելի մեծ երկրի կողքին, որը մեր թիրախային շուկան է, քանի որ ավելի փոքր երկրներն ավելի հյուրընկալ են: Նա ասաց, որ ինքը չորս անգամ եղել է Հայաստանում, և հանդիպել է վարչապետին և չորս նախարարների, ու դա հնարավոր չէ Ռուսաստանում: Այստեղ ունի հնարավորություն, խոսելու կառավարության պաշտոնատար անձաց հետ:

Ի՞նչ կարող է անել Հայաստանի զարգացման հիմնադրամը ձեզ համար, ինչպե՞ս կարող ենք օգնել ձեզ: Միշտ հարցնում են ինձ, թե ինչպե՞ս կարող եմ երաշխավորել ներդրումը: ինչպե՞ս կարող եմ վստահություն ներշնչել:

Չկա երաշխիք, սա բիզնես է, բիզնեսը ռիսկ է: Որքան բարձր է լինում ռիսկը, այնքան բարձր է լինում շահույթը: Իմ թիմն այստեղ կարող է երաշխավորել այն ծառայությունները, որոնք ավելի հարմարավետ կդարձնեն ձեր գործը: Կա երկու կարևոր բան, որ ուզում եմ ձեզ ասել:

Առաջին, մենք ծրագրեր ենք մշակում, մենք անվճար բիզնես խորհրդատվություն ենք մատուցում, որը ներառում է հարկային օրենքներ և իրավաբանական խորհրդատվություն: Այնպես որ, երբ դուք կատարում եք ներդրումներ, ես ուզում եմ, որ ձեր ներդրումը կատարեք ձեր աչքերը բաց, իմանալով ձեր ռիսկերը: Որոշումը ձերն է իսկ իմ գործն է վստահ լինել, որ դուք հասկանում եք խաղի կանոնները, իրավական սահմաններում:

Երկրորդը, մենք նաև հետագա օժանդակություն ենք ցուցաբերում ներդրողներին, և դա շատ կարևոր է: Մենք կապող օղակ ենք հանդիսանում ներդրողների և կառավարության միջև: Օրինակ, եթե դուք հարկային խնդիրներ ունենաք մեզ զանգահարում եք, հետևաբար մենք օրենքի սահմաններում լուծում ենք ցանկացած խնդիր, որը դուք ունեք:

Ինձ համար կառավարական հատվածի մեջ ներգրավվածությունը դժվար որոշում էր: Իմ մենտորն ինձ ասաց, որ այս գործն ինձ հնարավորություն է տալու ձևավորել ինչպիսին է լինելու Հայաստանը 2030-ին և այս գաղափարն ուզում եմ փոխանցել ձեզ՝ որպես ներդրողների: Ինձ համար շատ կարևոր է, որ ձեր շահույթը բարցր լինի ու ձեր բիզնեսը հաջողակ լինի, բայց նաև դուք ձեզ համարեք իբրև գործարարական մշակույթ ստեղծող, ինչը որ արեցին սիրիահայերը՝ փոխելով մեր սպասարկման մշակույթը: Բոլորին հրավիրում եմ մտածելու այս մասին. միացեք Հայաստանի թիմին:

Հայաստանի զարգացման հիմնադրամն այս օրերին մարզահամերգային համալիրի առաջին հարկում տեղադրել է տաղավար, և եթե ցանկանում եք ավելին իմանալ մեր նախագծերի մասին այցելեք մեզ, կարող եք նաև այցելել investmetprojects.am կայքը:

Շնորհակալություն

Արմեն Ավակյան,

Հայաստանի զարգացման հիմնադրամի նախագահ